**Նախագահ Դիտեր Ֆ. Ուխդորֆ**
Առաջին Նախագահության
Երկրորդ Խորհրդական

# Լցրեք աշխարհը Քրիստոսի սիրով

Սուրբ Ծննդյան մասին մտածելիս, մենք հաճախ մտածում ենք նվերներ տալու և ստանալու մասին: Նվերները կարող են սիրված ավանդության մասը լինել, դրանք սակայն կարող են նաև նվազեցնել այդ օրերի պարզ նշանակությունը և շեղել մեզ մեր Փրկչի ծնունդը իմաստալից ձևով նշելուց:

Իմ անձնական փորձից գիտեմ, որ ամենահիշարժան Սուրբ ծնունդները եղել են նրանք, որոնք առավել համեստ են եղել: Իմ մանկության նվերներն իհարկե համեստ էին, դատելով այսօրվա չափանիշներով: Երբեմն ես ստանում էի ձևափոխված վերնաշապիկ, մի զույգ ձեռնոց կամ գուլպա: Հիշում եմ մի հատուկ Սուրբ ծնունդ, երբ եղբայրս ինձ նվիրեց իր ձեռքով պատրաստած փայտե մի դանակ:

Սուրբ ծնունդը իմաստալից դարձնելու համար թանկ նվերները պարտադիր չեն: Հիշում եմ մի պատմություն, որը պատմել էր Երեց Գլեն Լ. Ռուդը, ով 1987-1992թթ. ծառայել է որպես Յոթանասունական: Տարիներ առաջ, երբ նա եպիսկոպոսի պահեստի տնօրենն էր, Սուրբ ծննդյան նախօրեին իր եկեղեցական ղեկավարից տեղեկացավ իրենց քաղաք տեղափոխված մի կարիքավոր ընտանիքի մասին: Երբ գնաց այցելելու նրանց փոքր բնակարանը, տեսավ 10 տարեկանից փոքր չորս երեխաներով մի միայնակ երիտասարդ մոր:

Այդ ընտանիքն այնքան շատ կարիքներ ուներ, որ այդ Սուրբ ծննդյանը մայրը չէր կարող նվերներ գնել իր երեխաների համար, նա չէր կարող նույնիսկ տոնածառ գնել: Եղբայր Ռուդը զրուցեց ընտանիքի հետ և իմացավ, որ երեք փոքր աղջիկները կուզենային տիկնիկ կամ խաղալիք կենդանիներ ստանալ: Երբ նա հարցրեց վեցամյա որդուն, թե ինչ կցանկանար նա, սովահար տղան պատասխանեց. «Կուզենայի մի ափսե վարսակի շիլա»:

Եղբայր Ռուդը խոստացավ տղային վարսակի շիլա և գուցե էլի ինչ-որ բան: Ապա նա գնաց եպիսկոպոսի պահեստ, վերցրեց մթերքներ և այլ պարագաներ, որոնք կբավարարեին այդ ընտանիքի անմիջական կարիքները:

Այդ առավոտ մի մեծահոգի Վերջին Օրերի Սուրբ իրեն 50 դոլլար էր տվել «որևէ կարիքավորի» օգնելու համար: Վերցնելով այդ 50 դոլլարը Եղբայր Ռուդը գնաց Սուրբ ծննդյան գնումներ կատարելու իր երեք երեխաների հետ միասին, որպեսզի նրանք օգնեին իրեն այդ կարիքավոր երեխաների համար խաղալիքներ ընտրել:

Մեքենան լցնելով ուտելիքով, հագուստով, նվերներով, տոնածառով և տոնական զարդարանքներով, Ռուդերը գնացին այդ ընտանիքի մոտ: Նրանք օգնեցին այդ ընտանիքի մորը և երեխաներին տոնածառը զարդարել: Ապա նվերները դասավորեցին տոնածառի տակ և տղային տվեցին վարսակի շիլայի մի մեծ պարկ:

Մայրը արտասվում էր, երեխաները ուրախ էին, և նրանք միասին Սուրբ ծննդյան երգեր երգեցին: Այդ օրը ճաշի սեղանի շուրջ հավաքվելով, Ռուդերի

ընտանիքը շնորհակալություն հայտնեց, որ հնարավորություն ունեցավ Սուրբ ծննդյան ուրախությունը պարգևել մեկ այլ ընտանիքի, և օգնեց մի փոքր տղայի ստանալ մեկ ափսե վարսակի շիլա։[1]

### Քրիստոսը և նվիրելու ոգին

Մտածեք, թե ինչ հասարակ, բայց միևնույն ժամանակ արժանավայել ձև էր ընտրել մեր Երկնային Հայրը Իր Որդու ծնունդը պատվելու համար։ Այդ սուրբ գիշերը հրեշտակները հայտնվեցին ոչ թե հարուստների, այլ հովիվների։ Մանուկ Քրիստոսը ծնվեց ոչ թե պալատում, այլ մսուրում։ Նա փաթաթված էր ոչ թե մետաքսե կտորով, այլ խանձարուրներով։

Այդ առաջին Սուրբ ծննդի պարզունակությունը նախանշեց Փրկչի կյանքը։ Թեպետ նա ստեղծել էր աշխարհը, քայլել վսեմաշուք և փառահեղ տերություններում, կանգնել Հոր աջ կողմում, բայց Նա աշխարհ եկավ որպես մի անօգնական մանուկ։ Նրա կյանքը համեստ ազնվականի օրինակ էր, և Նա քայլեց աղքատների, հիվանդների, վիատվածների և բեռնավորվածների մեջ։

Նա Ինքը լինելով թագավոր, չէր փնտրում մարդկային մեծ համբավ կամ հարստություն։ Նրա կյանքը, խոսքերը և ամենօրյա գործերը դարձան հասարակ, բայցև կատարյալ արժանապատվության կոթողներ։

Հիսուս Քրիստոսը, ով կատարելապես գիտեր ինչպես պետք է տալ, մեզ համար տալու օրինակ ծառայեց։ Նրանց, ում սիրտը ծանրացած է միայնակությունից և վշտից, Նա բերում է կարեկցանք և սփոփանք։ Նրանց, ում մարմինը և միտքը չարչարված է հիվանդությունից և տառապանքից, Նա բերում է սեր և ապաքինում։ Նրանց, ում հոգիները կքված են մեղքի ծանրության տակ, Նա բերում է հույս, ներում և փրկագնում։

Եթե Փրկիչը մեր մեջ լիներ այսօր, մենք կգտնեինք Նրան այնտեղ, ուր միշտ Նա էր՝ ծառայելով հեզերին, վիատվածներին, խոնարհներին, հուսալքվածներին և հոգով աղքատներին։ Այս Սուրբ ծննդյան օրերին և միշտ, թող որ մենք տանք Նրան՝ Նրա պես սիրելով։ Թող որ մենք հիշենք Նրա ծննդի, նվերների և կյանքի խոնարհ արժանապատվությունը։ Եվ թող որ մենք բարության, գթասրտության և կարեկցանքի պարզ գործերով լցնենք աշխարհը Նրա սիրո և բուժիչ զորության լույսով։

**ՀՂՈՒՄ**

1. Տես Glen L. Rudd, *Pure Religion: The Story of Church Welfare since 1930* (1995), 352–53; տես նաև Glen L. Rudd, “A Bowl of Oatmeal,” *Church News,* Dec. 2, 2006, 16։

---

### ՈՒՍՈՒՑԱՆՈՒՄ ԱՅՍ ՈՒՂԵՐՁԻՑ

Նախագահ Ուխդորֆն ուսուցանում է, որ մենք պետք է հետևենք նվիրելու Փրկչի օրինակին։ Կարող եք խնդրել նրանց, ում դուք այցելում եք, հերթով նշել այն նվերը, որ Փրկիչը տվել է իրենց, և քննարկեք, թե ինչպես կարող են նրանք այդ նվերն օգտագործելով ծառայել մարդկանց։ Օրինակ, եթե անդամն օրհնվել է երաժշտական կրթությամբ, նա կարող է գնալ և Սուրբ ծննդյան երգեր երգել իր հարևանների համար։ Կարող եք առաջարկել նրանց, ում այցելել եք, ծնկի իջնել աղոթքով և ոգեշնչում խնդրել այն մասին, թե ինչ նվերներով, ինչպես և ում հետ կարող են կիսվել։ Հետևեք ձեր ստացած ոգեշնչմանը։

## ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐ

### Սովորեք մյուսների փորձից

Նախագահ Ուխդորֆն անձնական փորձի մասին խոսելով ուսուցանում է, որ «ամենահիշարժան Սուրբ ծնունդները կարող են լինել նրանք, որոնք առավել անշուք են»։ Մենք կարող ենք այնքան շատ բան սովորել ավագ սերնդից. շատերն անցել են պատերազմի ժամանակներով, գործազրկության, հիվանդության կամ այլ փորձությունների միջով։ Խնդրեք ձեր ծխի կամ ճյուղի տարեց անդամներին պատմել իրենց համար առավել իմաստալից Սուրբ Ծննդյան մասին։ Կարող եք գրի առնել նրանց պատմությունները։ Աշխատեք սովորել նրանց օրինակից՝ Սուրբ ծննդյան օրերին կենտրոնանալով անկեղծ ծառայություն մատուցելու և Փրկչին հիշելու վրա։

ԵՐԵԽԱՆԵՐ

## Նվերներ Հիսուս Քրիստոսից

Որոշ մարդիկ տոնածառն օգտագործում են Հիսուս Քրիստոսի ծնունդը նշելու համար: Երբեմն մարդիկ մյուսների համար պատրաստած նվերները դնում են տոնածառի տակ: Ի՞նչ նվերներ է տվել ձեզ Փրկիչը: Նկարեք ձեր տոնածառը և ծառի տակ հինգ հատ նվեր: Կարդացեք ստորև տրված սուրբ գրությունները և յուրաքանչյուր սուրբ գրության համար մեկ նվեր ներկեք: Դուք կարող եք ի պատասխան նվերներ տալ Հիսուսին՝ օգնելով ուրիշներին:

Սաղմոս 33.6

Հովհաննես 14.27

Հովհաննես. 15.9

2 Նեփի 2. 8

3 Նեփի 15. 9

© 2014 by Intellectual Reserve, Inc. Բոլոր իրավունքները վերապահված են: Տպագրված է ԱՄՆ-ում: Անգլերենի հաստատումը. 6/14: Թարգմանության հաստատումը. 6/14: *First Presidency Message, December 2014*-ի թարգմանությունը: Armenian 10872 201

# Հիսուս Քրիստոսի աստվածային առաքելությունը. Խաղաղության իշխան

**Հավատք, Ընտանիք, Սփոփանք**

*Աղոթքով ուսումնասիրեք այս նյութը և ձգտեք հասկանալ, թե ինչով կարող եք կիսվել: Ինչպե՞ս կարող է Փրկչի կյանքի ու առաքելության մասին հասկացողությունը մեծացնել ձեր հավատքը Նրա նկատմամբ և օրհնել նրանց, ում մասին հոգ եք տանում այցելությամբ ուսուցանման միջոցով: Լրացուցիչ տեղեկության համար, այցելեք՝ reliefsociety.lds.org:*

*Սա Այցելող Ուսուցիչների Ուղերձների այն շարքից է, որը նվիրված է Փրկչի առաքելության տարբեր ոլորտներին:*

«Փրկիչն իրական խաղաղության աղբյուրն է,- ասել է Երեց Քվենթին Լ. Քուքը՝ Տասներկու Առաքյալների Քվորումից,- Կյանքի փորձություններով հանդերձ՝ Փրկչի Քավության և Նրա ողորմածության շնորհիվ, արդար կյանքը կպարգևատրվի անձնական խաղաղությամբ»:[1] Գիտակցելով, որ Հիսուս Քրիստոսը Խաղաղության Իշխանն է, մենք ներքին խաղաղություն կգտնենք և կմեծացնենք առ Նա մեր հավատքը:

Հիսուս Քրիստոսն ասել է. «Այս բաները խոսեցի ձեզ հետ, որ ինձանում խաղաղություն ունենաք. աշխարքումը նեղություն կունենաք. բայց քաջացեք, ես հաղթել եմ աշխարհքին» (Հովհաննես 16.33): Այդ ճշմարտության մասին իր վկայությունը բերելով, Սփոփող Միության գերագույն նախագահության երկրորդ խորհրդական Լինդա Ս. Ռիվսն ասել է. «Տերը ողորմած գտնվեց իմ հանդեպ՝ օգնելով թեթևացնել իմ բեռը: Նա օգնեց ինձ մեծ խաղաղություն զգալ»:[2]

Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Ռիչարդ Գ. Սքոթն ուսուցանել է. «Խաղաղության համար կատարյալ վայր կարող է հանդիսանալ մեր տունը, որտեղ հնարավորինս ամեն ինչ արել ենք Տեր Հիսուս Քրիստոսին կենտրոնում պահելու համար»:[3]

## Լրացուցիչ սուրբ գրություններ

Եսայիա 9.6; Ղուկաս 2.14; Հովհաննես 14.27; 1 Նեփի 13.37; Վարդապետություն և Ուխտեր 59.23

## Սուրբ գրություններից

Եսայիան մարգարեացավ Հիսուս Քրիստոսի՝ Խաղաղության իշխանի ծննդի մասին (տես Եսայիա 9.6): Հինգ տարի անց Ամերիկաներում Սամուել Լամանացին պատմեց Քրիստոսի ծննդին զուգորդող նշանների մասին (տես Հելաման 14.3, 5): Երբ մարգարեացած օրը եկավ, անհավատները սպառնում էին պատժել բոլոր քրիստոնյաներին, եթե այդ նշանները ի հայտ չգային: Նեփի մարգարեն «ուժգնորեն աղաղակեց առ Տերը՝ ամբողջ այդ օրը. և ահա, Տիրոջ ձայնը եկավ նրան՝ ասելով. . . . Էգուց ես գալիս եմ աշխարհ» (3 Նեփի 1.12–13): Նշաններն ի հայտ եկան, և Քրիստոսի ծննդով «ժողովուրդը սկսեց կրկին խաղաղություն ունենալ երկրում» (հատված 23):

Բեթլեհեմում Մարիամն «իր անդրանիկ որդին ծնեց և պատեց խանձարուրներով և մսուրի մեջ դրավ» (Ղուկաս 2.7):

**ՀՂՈՒՄՆԵՐ**

1. Քվենթին Լ. Քուք, «Անձնական խաղաղությունն արդարակեցության պարգևն է», *Լիահոնա,* մայիս 2013, 35:
2. Լինդա Ս. Ռիվս, «Հայցեք ձեր ուխտերի օրհնությունները», *Լիահոնա,* նոյ. 2013, 120:
3. Ռիչարդ Գ. Սքոթ, «Տան խաղաղության համար», *Լիահոնա,* մայիս 2013, 29:

### Խորհեք այս մասին

Ի՞նչ ուղիներով է Փրկիչը խաղաղություն բերել ձեր կյանք:

© 2014 by Intellectual Reserve, Inc. Բոլոր իրավունքները վերապահված են: Տպագրված է ԱՄՆ-ում: Անգլերենի հաստատումը. 6/14: Թարգմանության հաստատումը. 6/14: *Visiting Teaching Message, December 2014*-ի թարգմանությունը: Armenian 10872 201